# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

19 սեպտեմբերի 2022թ. թիվ 967

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, Ռ.ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ,
Դ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ, Հ.ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՄԱԼՈՅԱՆԻՆ
ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի կրթության. մշակույթի և սպորտի վարչության պետ Արամ Գրիգորյանին, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ռուզաննա Պողոսյանին, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Մերի Դալլաքյանին, քաղաքաշինության վարչության պետ Դավիթ Մանուչարյանին, զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հասմիկ Մկրտչյանին և նույն բաժնի ավագ մասնագետ Անի Մալոյանին ս/թ սեպտեմբերի 19-ին մեկ օրով՝ գործուղել ք.Երևան՝ հայ-ռուսական միջտարածաշրջանային իններորդ համաժողովին մասնակցելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

19/09/2022

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 19
ք.Վանաձոր